ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
08.09.2022թ. կնքված N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45» գնման պայմանագրի

ք. Երևան « 9 » նոյեմբեր 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Օսիպյան, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա մի կողմից և «ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս ընկերության տնօրեն Է. Եղոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր) հիմք ընդունելով 08.09.2022թ. կնքված N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.12 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել է 53000000 (հիսուներեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է անբաժանելի մաս, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Բակունցի 2-65
Կենտրոնական գանձապետարան	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900012411287	Հ/Հ 2480102764050000
ՀՎՀՀ 02593108	ՀՀՎՀ 08217004
Ի. Օսիպյան ----------	Է. Եղոյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
08.09.2022թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 գնման պայմանագրի
« 9 » նոյեմբերի 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի անվանումը	Նախատեսված է ֆինանսավորել Երևան քաղաքի 2022թ. բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին, ընդ որում											Ընդամենը տարեկան
	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Մաքրման սարքի /ավտոբուսների և տրոլեյբուսների դարպասային լվացակայան/ ձեռքբերում հետագա տեղադրումով, կարգաբերումով և գործարկումով										53000000	53000000	53000000

ումման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Կոգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411287
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ք. Երևան, Բակունցի 2-65
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2480102764050000
ՀՎՀՀ 08217004

Է. Եղոյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

evocaBANK

ԵՐԱՇԽԻՔ N 7919/07

(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 7,950,000.00 (յոթ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.08.2023թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի տեղակալ՝ **Հ. Պետրոսյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Է. Ջանինյան**

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am

N 7919/07 1660187212

Date 07.11 2022

evocaBANK

ԵՐԱՇԽԻՔ N 7920/07

(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Պրոֆ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,300,000.00 (հինգ միլիոն երեք հարյուր հազար) (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15 օգոստոս, 2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի տեղակալ՝ **Հ. Պետրոսյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Է. Ջանինյան**

ՀՀ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ԱՐՄԵՆԻԱ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001132

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am

N 7920/07 1660187213

Date 07.11 2022